ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

### ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Բյուջե բոլորի համար (Budget4All)» ծրագիրն իրականացվում է Գորիսի Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամի կողմից՝ Հայաստանի Սյունիք, Վայոց Ձոր և Տավուշ մարզերում, Վիններթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի 5 անդամ կազմակերպությունների՝ «Մեղրու կանանց Ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի, «Կապանի կանանց Ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի, «Սիսիանի կանանց Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամի, «Եղեգնաձորի կանանց Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի և «Իջևանի կանանց Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ իրականացվող կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Սյունիքի, Վայոց Ձորի ու Տավուշի մարզերի 10 խոշորացված համայնքների տեղական բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների մշակմանն ու ներդրմանը, ինչպես բարելավել ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմները ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում, ինչպես նաև բարձրացնել նրանց մասնակցությունը այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում:

Ծրագրի թիրախային համայնքներն են ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի խոշորացված 10 համայնքները (Մեղրի, Կապան, Գորիս, Տաթև, Տեղ, Սիսիան, Գորիայք, Արենի, Գլաձոր, Բերդ):

### Հանդիպման ընթացքը

Գորիս և Տեղ համայնքների ավագանու անդամների, վարչական ղեկավարների, համայնքապետարանների տարբեր բաժինների աշխատակիցների մասնակցությամբ տեղի

ունեցավ քննարկում՝ համայնքում սուբվենցիայի ծրագրի հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի մասին: Հանրային քննարկման նպատակն էր ՏԻՄ ներկայացուցիչներին ներկայացնել սուբվենցիայի ծրագրերի քննարկմանը հանրային մասնակցությունը խթանող կարգի բովանդակությունը, որը մշակվել է ,, Բյուջե բոլորի համար,, ծրագրի աշխատանքային խմբի կողմից:

Քննարկման ընթացքում ՏԻՄ ներկայացուցիչները, ծանոթանալով Ռեսուրս կենտրոն հիմնադրամի կողմից մշակված կարգի բովանդակությանը, կարևորեցին հանրային մասնակցությունը՝ համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերում: Միևնույն ժամանակ ավագանու անդամները և վարչական ղեկվարները հանդես եկան առաջարկություններով՝ ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան ֆինանսական սահմանափակ հնարավորությունների պարագայում, ստեղծել միջավայր, որպեսզի խոշորացված համայնքների առանձին բնակավայրերի բնակիչները հարցերն ու խնդիրները դիտարկեն ոչ թե անձնական պրիզմայում, այլ հանրային շահը նկատի առնեն, միևնույն ժամանակ ընդգծել են, որ այժմ հանրային հետաքրքրությունը տեղական խնդիրների և ծրագրերի վերաբերյալ բավականին ցածր է և անհրաժեշտ է նոր մեխանիզմների կիրառմամբ ստեղծել բարենպաստ միջավայր՝ հանրության հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով: Ավագանու անդամները կարևորել են հանրության իրազեկվածությունը և սուբվենցիայի ծրագրերի քննարկմանը ՔՀԿ-ների մասնակցությունը խրախուսելու նոր մեխանիզմի ներդման գործընթացը, քանի որ այս ձևաչափը առաջին անգամ է ընդունվելու ավագանու կողմից և կարևոր դերակատարում է ունենալու ծրագրային տնտեսական հիմնավորումները, ազդեցությունը հանրությանը ճիշտ ներկայացնելու համար: Մասնակիցներն ընդգծել են, փորձը ցույց է տալիս, որ եթե հանրությունը տեղեկացված է լինում համայնքի կողմից իրականացվող ծրագրերի առաջնահերթությունների անհրաժեշտության մասին, այնքանով առավել ներգրավված է լինում, մոտիվացված որևէ փոփոխության իրականացմանը մասնակցելու: Իսկ եթե իրազեկ չէ, ապա համեմատաբար անտարբեր է իր շուրջը տեղի ունեցող խնդիրների նկատմամբ և դժվար է լինում մոտիվացնել կամ ներգրավել որևէ նախաձեռնության, հանրային նշանակության խնդրի լուծմանը: Մասնակիցները քննարկել են նաև խոշորացված համայնքների բնակավայրերի բնակիչների մասնակցության մեխանիզմների բարելավման քայլերը՝ հանրային քննարկումներին ակտիվորեն մասնակցելու նպատակով: Կարևորվելվել է կարգի մեջ ներառված իրազեկման գործիքակազմի կիրառումը, այդ թվում՝ առակա բոլոր հարթակների օգտագործումը՝ ուղղված ՔՀԿ- ներից և հանրությունից եկող հետադարձ կապի, առաջարկությունների, դիտարկումների ապահովմանը: Ընդգծվել է նաև ՔՀԿ-ների հետ համագործակցության հարթակների ստեղծման մեծանիզմի կարևորությունը, միևնույն ժամանակ խոսվել է շահագրգիռ կազմակերպությունների մասնագիտական աջակցության մասին: Մասնավորապես, որ ՔՀԿ-ների մասնակցությունը հնարային քննարկումներին կամ ծրագրերի կազման գործընթացում ոչ թե ծրագիրից ծրագիր, կամ ծրագրային

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

մոնիթորիգով սահմանափակվի , այլ կառուցողական և երկարատև համատեղ աշխատանք լինի՝ ուղղված հանարային կյանքի որակի բարելավմանն ուղղված ծրագրերի կազմմանը:

Ամփոփելով քննարկումը՝ որոշվեց
Համայնքում Սուբվենցիոն ծրագրերի հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի վերաբերյալ առաջարկությունների հիման վրա բարելավել և ներկայացնել ավագանու հաստատման՝ առաջիկա նիստի ընթացքում:

Աշխատանքային հանդիպմանը մասնակից ավագանիների ցանկը՝

1. Արմեն Մկրտչյան _____
2. Մասիսի Ղևոնդյան _____
3. Արարատ Աղաբեկյան _____
4. Կարեն Լազարյան _____
5. Էրիկ Աղաջանյան _____
6. Նարեկ Օրդյան _____
7. Գուրգեն Հակոբյան _____
8. Սամվել Մաքունց _____

Նիստը վարեց՝ Իրինա Յոլյանը
Արձանագրեց՝ Աննա Ալեքսանյանը

30.05.2019թ

WINNET
ARMENIA